ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-26/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան, Շիրակի 88/1 19 հունվարի 2026թ.

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝
Հանձնաժողովի նախագահ՝
Վահագն Գրիգորյան՝ Գլխավոր ինժեներ
Անդամներ՝
Վահան Գալստյան՝ ՄՌԿ բաժնի պետ
Արսեն Այվազյան՝ ՖՏ բաժնի հաշվապահ-գլխավոր հաշվապահ
Արարատ Այվազյան՝ Նյութատնտեսական բաժնի պետ
Կարեն Ալեքսանյան՝ Ավտոպարկի հերթապահի պետ
Հանձնաժողովի քարտուղար՝
Արսեն Ավագյան՝ Գնումները համակարգող մասնագետ

1. **Տեղեկություն հայտերի բացման, գնահատման օրվա և ժամի մասին.**

1.1 «ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-26/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերն ու հայտարարությունը հրապարակվել է 2025թ. դեկտեմբերի 29-ին gnumner.am պաշտոնական կայքում և armeps.am համակարգում:

1.2 Հայտերի վերջնաժամկետ է սահմանվել 2026թ. հունվարի 08-ը ժամը 14:30-ն:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/, գտնվելու վայրերի հասցեները և գնային առաջարկները.**

«ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-25/88» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հասցե	Ապրանքի անվանումը	գնային առաջարկը առանց ԱԱՀ /հազ. ՀՀ դրամ/	գնային առաջարկը ներառյալ ԱԱՀ /հազ. ՀՀ դրամ/	Նախահաշվայի գին հազ. ՀՀ դրամ
1	«Մերինե Դավթյան» Ա/Ձ	ՀՀ Գեղարքունիքի մ., գ. Լճաշեն, Լճաշենի հրաբխային խարամի հանքավայրի հարավային տեղամաս Baghdasaryan_1978@mail.ru ՀՎՀՀ 75475335	ավազ	23400.0	23400.0	23400.0

3. **Նիստի կասեցում**

«ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-26/4» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի բացման նիստի արդյունքում պարզվեց, որ «Մերինե Դավթյան» Ա/Ձ-ի կողմից կցված Հավելված 1.1-ում առկա չէ ընկերության ղեկավարի էլ. ստորագրությունը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում հստակ նշված չէ մատակարարվելիք ապրանքի գտնվելու վայրը:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի՝ նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և մասնակցին առաջարկվել է շտկել փաստաթղթերում տեղ գտած անհամապատասխանությունները և սահմանված կարգով ներկայացնել շտկված փաստաթղթերը «ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-26/4» ծածկագրով ընթացակարգի քարտուղարին մինչև նիստի կասեցման ավարտը:

Շտկված փաստաթղթերը ժամանակին չներկայացնելու դեպքում կկիրառվեն վերոնշյալ կարգի 42-րդ կետի դրույթները:

Սահմանված կարգով և ժամկետում մասնակցի կողմից ներկայացվել են շտկված փաստաթղթերը:

4. Տվյալներ՝ հայտը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

Մասնակցի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է սահմանված կարգի պահանջներին:

5. Տվյալներ յուրաքանչյուր բացված հայտում փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմանների համապատասխանության մասին.

«ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-26/4» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով մասնակցի կողմից ներկայացվել է հրավերով պահանջվող փաստաթղթերը

6. Հանձնաժողովը որոշեց՝

Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել «Մերինե Դավթյան» Ա/Ձ-ին, որպես հրավերի պահանջներին համապատասխան և առավել ցածր գին ներկայացրած մասնակից:

Հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը և սահմանել «ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-26/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում անգործության ժամկետ չկիրառելը՝ համաձայն "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի:

Հանձնաժողովը որոշեց սահմանված կարգով ծանուցել «Մերինե Դավթյան» Ա/Ձ-ին՝ ընտրված մասնակից ճանաչելու մասին և ներկայացնել պայմանագրի նախագիծը, որը կկնքվի ընտրված մասնակցի կողմից պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու դեպքում:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Անդամներ՝ Ղ. Գալստյան

Ա. Այվազյան

Ա. Այվազյան

Կ. Ալեքսանյան

Քարտուղար՝ Ա. Ավագյան